*ւատ ազգէն, որք են սուտ քրիստոնեայք, պիղծ Օլախ ազգն, զոր են Մա-
կեդոնեցիք և արիոսեանք, (ըստ կարծեաց գրողին)։*

1562. *Հայոց թվ. ՌԺԱ, Մայիս ամսոյ ԺԲ. Հրամանաւն Թագաւորին բա-
րեպաշտ Զիկմունդի, որ կոչի Ակուստուս, Կամենից քաղաքին իշխանին հրա-
մայեաց գալ առ ինքն արագահաս և փութանակի. վասն զի չարախօսքն նո-
րա մատնել էին Թագաւորին. եթէ, ի քում Թագաւորական հրամանի ոչ
հնազանդի, և ոչ ունի երկիւղ, և զամենայն թշնամիքն զՕլախաց երկրին
զիշխանին՝ թողել է որ ել և մուտ են ի Կամենից բերդն. զոր բնաւ այդ-
պիսի ոմանք բերդ ոչ էին մտեալ. և այլ բազում չարախօսութիւն ունէին առ
Թագաւորն՝ վասն այդ իշխանին. զոր անունն իւր կոչի Վլոտէք Բան Մա-
ցէյ։ Եւ էին չարախօսքն երկու մեծամեծ իշխանք. մինն Վոյվոտա Բոտոլսքիյ
(գաւառի), զոր Բան Ադարոխովսքիյ կոչեն, և միւսն Բան Եազլովէցքիյ։ Եւ
յորժամ այս չարախօսութիւն եղեւ առ Թագաւորն, և ահա Թագաւորն հրա-
մայեաց գալ նմա փութանակի առ իւր. և յորժամ եկ և գնաց առ Թագա-
ւորն, ահա այդ ոմն Եազլովեցքին եկն ի Կամենիցն, և կամեցաւ գնալ առ
բերդն, զի նստցի փոխանակ Բան Վլոտքսին իշխանութեան. և արքն որք
էին ի մէջ բերդին՝ և նոքա եւս էին մեծարարք, զոր անձնեալ էր նոցա
զբերդն այս իշխանն Բան Վլոտքս. ընդդէմ կացին նմա, և ոչ ետուն թոյլ
մտանել և նստել իշխանութիւն ի մէջ բերդին. և ապա նկուն եղեւ, և ամո-
թալից դարձաւ և գնաց։ Իսկ այս բարէհոգի իշխանն որ կոչի Վլոտէք Բան
Մացէ, գնաց առ Թագաւորն, և զամենայն թշնամեաց իւրոց զբերանն պա-
պանձեցոյց և ամօթ արար զնոսա. և ինքն ի Թագաւորէն պատուեցաւ և գո-
վեցաւ, և դարձեալ եկն և նստաւ իւր իշխանութեան վրայ յայտնի և համ-
արձակ, ի պարծանս իւրայնոց և ի յամօթ ներհակաց իւրոց։ Այսքան
առ այս։*

1562. *Հայոց թվ. ՌԺԱ. Գնեազ Վիշնովսքիյ ոմն Ըռուզ իշխանն՝ մի ան-
կամ զԹագաւորն ուրացաւ, և ապստամբ ինչ գործեաց, և փախեաւ ի Թուրքի
խանդիքարն, և դարձեալ եկն. որպէս կայ առաջագոյն գրեալ ի մէջ Թղթիս
զնորա պատմութիւն. և ոչ ինչ չար արար նմա Թագաւորն. այլ մանաւանդ
ետ ի նա զամենայն զգաւառն իւր, որչափ ինչ ունէր բերդ և գիւղ։ Յետ
փոքր մի ժամանակի դարձեալ ապստամբութեամբ գնաց փախստական առ
Մոսկովի գնեազն. և ոչինչ բազում ժամանակ եկաց առ նա. և դարձաւ եկն
յետ երկուց ամաց իւր գաւառն. և բարեպաշտ Թագաւորն Զիկմունդ ոչ ինչ
չար արար նմա։ Բայց այս ոչ է հիանալի. զի երկու անկամ խաբեաց
և ուրացաւ զԹագաւորն. վասն զի նոցա ազգին սովորութիւն է ամենայն՝ ու-
րեք զայս գործել, մինչեւ որ անձամբ զանձն իւրեանց դատապարտեն։ Այս
քան և առ այս։*

1562. *Հայոց թվ. ՌԺԱ. Սեպտեմ. ԺԵ. Բարեպաշտ Թագաւորն մեր Զիկ-
մունդ Ակուստուս՝ Մոսկովի վերայ հեծելազօր ղրկեց. և աստուածային օգնակա-*